ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-3-8-Ա

ք. Երևան 08.04.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի ապրիլի 8-ի նիստում քննարկեց 2025 թվականի հոկտեմբերի 14-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «Լիմիթեդ Լիաբիլիթի Քոմփանի «ՔյուԷսԱր Սիսթեմ»» ընկերության (115054, Moscow, st. Valovaya 26, Russia, RU) «Համեղ է և վերջ» (No20223116) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Հայտում նշված՝ մնացած ապրանքների և ծառայությունների համար» հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բաղկացած կամ պարունակում է կեղծ և (կամ) սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ՝ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակի, ապրանքի կամ ծառայության տեսակի, բնույթի, որակի, քանակի, ստեղծման նպատակի, արժեքի, աշխարհագրական ծագման կամ ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշում առկա «Համեղ է և վերջ» գրառումը նշում է ապրանքների և մատուցվող ծառայությունների տեսակը և ստեղծման նպատակը, այն է՝ «սննդամթերքին, ըմպելիքներին (խմիչքներին), դրանց հետ կապված ապրանքներին և ծառայություններին վերաբերող» և, որի գրանցումը վերոնշյալ ապրանքների և ծառայությունների համար համար կարող է սպառողներին մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցում, հաղորդելով՝ կեղծ և սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների

մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բաղկացած կամ պարունակում է կեղծ և (կամ) սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ՝ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակի, ապրանքի կամ ծառայության տեսակի, բնույթի, որակի, քանակի, ստեղծման նպատակի, արժեքի, աշխարհագրական ծագման կամ ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշում առկա «Համեղ է և վերջ» գրառումը նշում է ապրանքների և մատուցվող ծառայությունների տեսակը և ստեղծման նպատակը, այն է՝ «սննդամթերքին, ըմպելիքներին (խմիչքներին), դրանց հետ կապված ապրանքներին և ծառայություններին վերաբերող» և, որի գրանցումը վերոնշյալ ապրանքների և ծառայությունների համար համար կարող է սպառողներին մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցում, հաղորդելով՝ կեղծ և սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողը ներկա չէր բողոքարկման նիստին:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «Լիմիթեդ Լիաբիլիթի Քոմփանի «ՔյուԷսԱր Սիսթեմ»» ընկերության «Համեղ է և վերջ» (No20223116) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ